



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՀՐԱՄԱՆ

16.02.2015թ.

ԹԻՎ 29/1

#### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, առաջնորդվելով Հյուսիսային համալսարանի կանոնադրությամբ.

#### Հրամայում եմ

1. Հաստատել «Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցման ընդունելության կարգը» համաձայն հավելվածի:
2. Հյուսիսային համալսարանի ընդունող հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ ընդունելության գործընթացի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ տարածվում է 2015-16 ուստարվանից հետո հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպման գործընթացի վրա:
4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահում եմ պրոռեկտոր Մ.Մակիչյանին:



Բ.Մակիչյան



Կ Ա Ր Գ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգը կանոնակարգում է Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ դիմորդների ընդունելության գործընթացը:
2. Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի սկզբունքով, յուրաքանչյուր տարվա համար բուհի կողմից հրապարակված վճարովի եւ անվճար տեղերի քանակին եւ պայմաններին համապատասխան, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված լիցենզիայի տեղերի շրջանակներում:
3. Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունեն բարձրագույն, միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց տարիքի սահմանափակման:
4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները, ովքեր հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատանքի են ընդունվել մինչև 2010 թվականը, կարող են ուսումը շարունակել տվյալ մասնագիտության 3-րդ կուրսից՝ նախապես, ուսումնական պարապմունքներին նախորդող մեկ ամսյա ժամկետում հանձնելով առարկայական տարբերությունները:
5. Հեռակա ուսուցման ընդունելությունն իրականացվում է տվյալ մասնագիտության բովանդակությանը համապատասխան թեմատիկ հարցազրույցով:
6. Դիմորդների քանակը լիցենզիայով տրամադրված տեղերի սահմանաչափը գերազանցելու դեպքում կազմակերպվում է մրցույթ: Մրցույթում նախապատվությունը տրվում է տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին, մեդալակիր-դիմորդներին, դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին, դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին, տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին: Վերոնշյալ մրցութային նախապայմանների հավասարության դեպքում, ինչպես նաև տվյալ ուստարվա համար Հյուսիսային համալսարանի կողմից մրցութային լրացուցիչ նախապայմաններ սահմանված չլինելու դեպքում, ընդունելության նախապատվությունը տրվում է առավել վաղ դիմած դիմորդներին:
7. Ըստ մասնագիտությունների հեռակա ուսուցման յուրաքանչյուր տարվա ընդունելության հայտարարությունը, այդ թվում, վճարովի եւ անվճար տեղերի քանակը, վարձավճարի չափը, ընդունելությանը եւ մրցույթին ներկայացվող լրացուցիչ նախապայմանները նախապես, ոչ ուշ քան ընդունելության դիմումների

համար սահմանված վերջնաժամկետից 2 ամիս առաջ հրապարակվում են Հյուսիսային համալսարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում, <<Հյուսիսային համալսարան>> պարբերականում, գովազդային թերթիկներում, ինչպես նաև տեղեկատվության տարածման համապատասխան այլ միջոցներով:

8. Ընդունելության համար դիմորդները ոչ ուշ, քան տվյալ ուստարվա սեպտեմբերի 20-ը ընդունող հանձնաժողովի քարտուղարություն են ներկայացնում, դիմում հայտ, կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) միջնակարգ կրթության ատեստատը, կամ նախնական, կամ միջին մասնագիտական, կամ մասնագիտական տեխնիկական, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին փաստաթուղթը՝ դիպլոմը իր հավելվածով (բնօրինակը),

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

3) անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (բնօրինակը պատճենի հետ համեմատվելուց հետո ետ է վերադարձվում) եւ պատճենը՝

- անձնագիր, կամ ծննդյան վկայական, կամ փախստականի վկայական, կամ ՀՀ հատուկ անձնագիր, կամ ՀՀ կացության վկայական,

- սոցիալական քարտ,

Առկայության դեպքում՝

- զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,

- միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմները,

- քաղվածք աշխատանքային գրքույկից,

4) ընդունելության փաստաթղթերի ընդունման համար սահմանված Հյուսիսային համալսարանի դրամարկղ կամ բանկային հաշվին 4800 (չորս հազար ութ հարյուր) դրամ գումարի վճարումը հաստատող փաստաթուղթ:


9. Դիմում ներկայացվելու պահին, կամ հարցազրույցի կազմակերպման պահից առնվազն 10 օր առաջ դիմորդները տեղեկացվում են հարցազրույցի անցկացման օրվա եւ վայրի մասին: Հարգելի պատճառով հարցազրույցի չներկայացած դիմորդի համար հնարավորության դեպքում կազմակերպվում է լրացուցիչ հարցազրույց:

10. Հարցազրույցը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովը, ներգրավելով տվյալ մասնագիտության գծով համապատասխան մասանգետ(ներ)ի: Տվյալ ուստարվա համար հարցազրույցը կազմակերպվում է հունիսի 25-ից մինչև հոկտեմբերի 20-ը: Դիմորդների քանակով պայմանավորված նշված ժամկետը կարող է փոփոխվել:

11. Հարցազրույցի շեմը հաղթահարած է եւ ընդունված է համարում այն դիմորդը, ով կստանա հարցազրույցում ներգրաված մասնագետ(ներ)ի դրական գնահատականը:

12. Սույն կարգով ընդունված ուսանողների հրամանագրումը կատարվում է մինչև հոկտեմբերի 25-ը:

ՌԵԿՏՈՐ



Բ.ՍԱԿԻՉՅԱՆ